ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՆՔ, ՆԻԿՈԼԱՅ ԵՐԿՐՈՐԴ, ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ, ԹԱԳԱՒՈՐ ԼԵՀԱՍՏԱՆԻ, ՄԵԾ ԻՇԽԱՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ, *յայտարարում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին. Բարձրեալի կամքով երեք դար առաջ Ռիւրիկովիչների թագաւորական ցեղը վերջացաւ, որոնք հիմնեցին և համախմբեցին Ռուսաց երկիրը։ Մանր արհաւիրքներ թափուեցին Մեր հայրենիքի վրայ. անիշխանութիւնն ու խռովութիւնը տիրեցին Ռուսաստանին, օտար թշնամիները խուժեցին նրա սահմանները, նախաձեռ Մոսկուան իւր արքունիներով թշնամու աւար դարձաւ. բայց Ամենակարող Տէրը Ռուսաստանին ապառնացող այսպիսի մեծ վտանգի մէջ չթողնելով, Իւր մեծ ողորմութեամբ, կոչելով ռուս մարդկանց զօրեղ հոգիները, որոնք միացած Տրոյցէ-Սերգիևսկի Մայրավանքի հոմանու տակ, ոգևորելով ռուս ժողովուրդը հայրենիքը պաշտպանելու համար և Աստուծոյ օգնականութեամբ յաղթելով թշնամուն, ազատեց Մոսկուան թշնամու բռնութիւնից։ Ապա 1613 թուի փետրուարի 21-ին հրաւիրուած Մեծ Ջեմսկի ժողովը միաձայն թագաւոր ընտրեց Ռօմարին Միխայիլ Ֆեօդորովիչ Ռոմանովին, որը արիւնով մօտ էր Ռիւրիկի և Սբ. Վլադիմիրի հանգած թագաւորական ցեղին։ Երկար խորհելուց և ջերմ աղօթելուց յետոյ, Մեր պապանի նախահայրը իւր մօր՝ միանձնուհի Մարթայի օրհնութեամբ ընդունեց իւր վերայ թագաւորական ծառայութեան ծանր լուծը։ Այն ժամանակուանից մինչև այժմ Աստուածային Աջը պահպանում է և բարձրացնում Մեր պետութիւնը՝ Ռուսաստանի գահակալ Մեր թագակիր նախորդների և Ռուսաստանի հաւատարիմ զաւակների միահամուռ աշխատանքներով, ստեղծուում էր և ամրապնդուում Ռուսաց*

պետութիւնը։ Յաճախ ենթարկուում էր Մեր հայրենիքը փորձութիւնների, սակայն ոչ ոք ժողովուրդը, որ ամաբ է ուղղափառ հաւատի մէջ և զօրեղ ջերմ սիրով դէպի իւր Հայրենիքը և անձնանուէր հաւատարիմ դէպի իւր Միածնի պետները, յաղթահարում էր արհաւիրքներին և դուրս էր գալիս նորոգուած և ամրապնդուած։ Մասիսի Ռուսաստանի նեղ սահմաններն ընդարձակուեցին և Ռուսաց Պետութիւնն այժմ անցել է աշխարհի առաջին պետութեան շարքը։ Մեր սիրելի ժողովրդի հետ միացած անմոռոռ միութեամբ, յուսով ենք այսուհետև ոչ ոք չի համարձակուիր ճնշել ժողովրդային կեանքի խաղաղ շինարարական ճանապարհը։ Անցեալ երեք դարու վերայ ակնարկ ձգելով մենք տեսնում ենք նրա ամրոյզ ընթացքում Ռուսաստանի բաւական դաւակների բարձր գործերը, որոնք չեն խնայել նրա համար ոչ աշխատանք, ոչ կարողութիւն և ոչ իսկ իրենց կեանքը։ Թող միշտ սուրբ մնայ նոցա յիշատակը Մայր երկրի պատմագրութեանց մէջ և Ռոմանովների Տան թագաւորութեան 300-ամեայ համաժողովրդային ուխտադրութեան այս հանդիսաւոր օրը Մեզ համար ուրախալի է երախտագիտական զգացմամբ Մեր աչքերը կենտրոնացնել այն ծառայութիւնների վերայ, որ մատուցել են Ռուսաստանին նրա թագաւորների գործակիցները և բոլոր հաւատարիմ հպատակները։ Մեծ են ուղղափառ եկեղեցու հովիւների և հովուապետների ծառայութիւնները, որոնք բաւարարեցին Ռուսաստանը ճշմարիտ հաւատով լուսով և փառաւորեցին նրան քրիստոնէական սիրով և բարեպաշտական գործերով։

Ռուսաստանի բարեծնունդ արդարադատութիւնն արեամբ վաւերացրել է իւր անձնուիրութիւնը դէպի հայրենիքը և պետական բարեկարգութեան աշխատանքների մէջ անսահմանօրէն ցոյց է տուել քաջարական առաքինութեան բարձր օրինակ, մանաւանդ յիշատակութեան արժանի զիւղացիների ճորտութիւնից ազատութեան տարեշրջանում։

Հաւատքի, գահի և հայրենիքի պաշտպան ռուս զինուորի պատկերը երևում է փառքի և մեծութեան փայլի

մէջ։ Ռուսական քրիստոնէայ զինուորութեան անուանման քաջութիւնը և անյողդողդ հաւատարմութիւնը դէպի իւր պարտքը, ապացոյց Ռուսաստանը թշնամիներից և այժմ ծառայում են որպէս նորա ամուր վահան ընդդէմ թշնամու յարձակման։ Շատ հաստատուն և ազնիւ աշխատանք է դրուած պետութեան կարգմակերպութեան գործում։ Մեզ նուիրուած պաշտօնատար անձանց կոչից տանց կոչման և դիրքի խարութեան։

Դիւանների, դրատներեան և վերադրուեանի շրջանում ակամաւոր ուս մարդիկ վատակեցին իրենց համար պատուաւոր անուն և նրանց աշխատանքներն ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւեցին, ոչ միայն Մեր հայրենիքում արժանացան բարձր գնահատման, այլ և նրա սահմաններից դուրս հեռու երկրներում։ Գիւղատնտեսութեան, վաճառականութեան և արդիւնաբերութեան ապարիզում առաջ եկան յաման աշխատանքի և լայն նախաձեռնութեան ուս մարդիկ, որոնք միահամուռ ջանքերով ստեղծեցին Ռուսաստանի անուանական կարողութիւնը։ Անչափ է և անթիւ ստանալ միլիոնաւոր երկրագործների ծառայութիւնները Ռուսաստանի համար, որոնց հաւերութեամբ և աշխատանքով բարեկարգուում է երկրագործական արտադրանքը և բազմանում են ժողովրդի հարստութեան աղբիւրները։ Շնորհակալութեամբ յիշելով հայրենիքի բարօրութեան համար բոլոր աշխատողներին, կոչ ենք անում այժմ Ռոմանովների Տան թագաւորութեան չորրորդ դարի շէմքին Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին՝ վերատաքել Մեզ հետ ի միասին առ Ամենաբարձրեալն աղօթքներ Մեր թագակիր նախորդների հոգւոյ հանգստեան համար և բոլոր նրանց, որոնց Մեր հայրենիքը պարտական է իւր հզօրութեամբ և մեծութեամբ։ Ամենազօրութեամբ լի յիշատակը զոհուողների քաջագործութեանց մասին թող ծառայի իբրև կատակ ապագայ սերունդների համար և թող միացնի Մեր գահի շուրջը բոլոր հաւատարիմ հպատակներին՝ նոր աշխատանքների և արիութեանց համար ի փառս և ի բարօրութիւն Ռուսաստանի։

Ճանկանալով արժանաւորապէս նշանակալից դարձնել այսօրուայ հանդիսաւոր օրը և այս յաւերժացնել ժողովրդեան յիշողութեան մէջ, բարւոք համարեցինք բաշխել շնորհներ Մեր հպատակներին, որի մասին հրամայեցինք Կառավարիչ Սենատին սոյն թուին տուած հրամանագրով հրատարակել ի լուր ժողովրդեան։

Թող շպակասի Աստուածային Օրհնութիւնը Մեր և Մեր սիրելի հպատակների վրայից։

Թող Ամենակալ Տէրն ամրացնի և բարձրացնի Ռուսաց երկիրը և Թող շնորհի Մեզ այժ՝ բարձր և ամուր պահելու հնադարեան փառաւոր դրօշակը։

Տրուած է Ս. Պետերբուրգում, փետրուարի 21-ին, Քրիստական 1913 թուին, իսկ Մեր Թագաւորութեան տասնեներորդ տարում.

Իսկական վերայ Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով տարբերած է «ՆԻԿՈԼԱՅ»։